

Ա. Անձ Յոքելեանին օրը ձնած բոլոր
մանչերը անուանել Մեսրոպ և աղջկեները
Մեսրոպանոյց, Մեսրոպիդեւխտ, Մեսրոպուհի
կամ Մեսրոպինէ:

Բ. Նոյն օրը մեռնազ բոլոր Պոլսցի Հայ-
յերը փոխագրել Մայր Եկեղեցին, որուն զի
իրենց զագալներուն մէջ, ներկայ գանուին
տեղի ունենալիք արարութեան:

Գ. Նոյն օրը բոլոր թերթերը հրատարա-
կել բաւն Մեսրոպեան երկաթագիր տառե-
րով:

Դ. Խնդրել ժանօվ գրագէտ Սահմակ-Մես-
րոպէն որ գոնէ մէկ օրուան համար իր ա-
նունը փոխի, թիւրիմացութեան և շփո-
թութեան տեղի չտալու համար:

Ե. Եարագի օրուան պաշտօնական արա-
րողութիւններու միջոցին միմիայն գրարար
հայերէն խօսիլ:

Զ. Եկեղեցին բեմէն հանդիսաւորապէս
բանազրել բուօն այն զրագէտները որոնք
ուղագրութիւն չեն գիտեր:

Ահաւասիկ քանի մը թելալրանցներ ո-
րոնք գրեթէ համարժէք են կիւթէմպէրէկի
արձանին վրայ Մայնցի քաղաքապետին
ձեռքով և երաժշտախմբի մը ընկերակցու-
թեամբ դաշնեառակ մը զնելու:

Այս կարգի ուրիշ առաջարկներ ալ, մեծ
քանակութեամբ, կրնանք դնել կրկնակ Յո-
րելեաններու կարգագիր մասնախմբին տթա-
մադրութեան ներքեւ, եթէ հարկ ըլլայ:

Երմիկնդ օՏԵԱ

ՄԷԿ ՔԱՆԻ ԹԵԼԱԴՐԱՆԲՆԵՐ

ՄԵՌ ՅՈՒՆԻՉԱՆԻԿ ԱՌԹԻՔ

Կրկնակ Յոքելեաններու կարգադիր մաս-
նախմբի անդամներէն մին առաջարկեր է
որ մեծ տօնին օրը անտես յառնուի տպա-
գրութեան գոտի և մարդկութեան պար-
ծանը եղող կիւթէնպէրէկը և ազեր է որ
դափնեայ պատկ մը գրուի անոր արձանին
վրայ, որ կը դանուի Գերմանիայ Մայնց քա-
ղաքին մէջ: Մասնախմբին անդամը առա-
ջարկեր է նաև որ պատկը գրուի տեղոյն
քաղաքապետին ձեռքով և երաժշտական
խմբի մը ընկերակցութեամբ Յարգելի ան-
դամը չէ բայց թէ երաժշտախմումբը ի՞նչ
եղանակ պիտի նուագէ, բայց յայտնի է որ
մէջ մեժասցանչ դու լեզուէն աւելի յար-
մար եղանակ կարելի չէ դանել:

Մասնախմբը մերժեր է այս տռաջար-
կը: Այդ մերժումէն քաջալեթուած՝ ես ա-
մէկ քանի թելազրանքներ կ'ուզեմ ընել,
յուսակով որ անոնք ալ կիւթէմպէրէկի դափ-
նայ պատկին քով կը զետեղուին: